

HASMIK GHAMBARYAN
4th year Bachelor, Department of Management

THE EFFECT OF NATIONAL CURRENCY EXCHANGE RATE ON THE EXPORT POTENTIAL

Keywords: *national currency exchange rate, export potential, currency regulation policy, economic potential*

The influence of foreign currency on the country's export potential is always in the center of attention of economists and it has been the subject of several scientific studies and discussions. In this study, the impact of the Republic of Armenia's national currency (Dram) exchange rate on the Republic's export potential has been examined. We have determined which product groups' export volumes were primarily affected by the overvaluation of the Armenian dram, and the choice of currency regulation policy has been discussed in order to stabilize the situation by the bank.

ԳՈՀԱՐ ՊՈՂՈՍՅԱՆ
*Վիճակագրություն, բակալավրիատ,
3-րդ կուրս*

**ՀՀ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺՆԹԱՅԻ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Հիմնաբառեր. *դրամական փոխանցում, ներհոսք,
արտահոսք, զույր ներհոսք*

Դրամական փոխանցումների մակարդակը տարեցտարի փոփոխվում է՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են տնտեսական պայմանները, զբաղվածության հնարավորությունները և միգրացիայի ձևերը: Ընդ որում, վերջին տարիներին դրամական փոխանցումների հոսքի ծավալը, հատկապես դեպի զարգացող երկրներ, հասել է ռեկորդային մակարդակի, ինչն էլ այս թեման դարձրել է արդիական:

Սույն հոդվածում, կիրառելով վիճակագրական մեթոդներ, ներկայացվում են ՀՀ դրամական փոխանցումների հոսքի փոփոխությունները և այդ փոփոխություններն առաջացրած հավանական պատճառները:

Ներածություն: Օրեցօր գլոբալացվող աշխարհում մարդկանց տեղաշարժը դարձել է դարաշրջանի որոշիչ հատկանիշը: Անկախ պատճառից (նոր տնտեսական հնարավորություններ, կրթություն, հարազատների հետ վերամիավորման ցանկություն)՝ միգրացիան դարձել է համաշխարհային նշանակալի երևույթ: Մշակույթների, գաղափարների և տաղանդների փոխանակման համապատկերին ի հայտ է գալիս մեկ այլ կարևոր ուղղություն՝ դրամական փոխանցումները:

Դրամական փոխանցումները՝ միգրանտների կողմից իրենց հայրենի երկրներ փոխանցվող միջոցները, վերածվել են տնտեսությունները ձևավորող և աշխարհագրական բացերը հաղթահարող ահռելի ուժ: Դրամական փոխանցումներն ամբողջ աշխարհում ազդում են տնտեսական կայունու-

թյան, աղքատության կրճատման և պետության զարգացման հեռանկարների վրա:

Դրամական փոխանցումների թեմայի արդիականությունը կարելի է ընդգծել մի քանի կետով: Նախ՝ ներկայումս մարդկանց ազատ տեղաշարժի արդյունքում շատ զարգացող երկրների համար դրամական փոխանցումները դարձել են եկամտի աղբյուր: Բացի դրանից, պետությունները, հատկապես՝ զարգացող, մշակում են տարբեր ռազմավարություններ՝ ավելի շատ դրամական փոխանցումներ ներգրավելու համար, քանի որ այդ գործընթացը նպաստում է տնտեսության զարգացմանը: Ինչպես նաև՝ ոլորտ են մուտք գործել տեխնոլոգիական նորարարությունները՝ հնարավորություն տալով դրամական փոխանցումները կատարել ավելի պարզ, արագ ու մատչելի տարբերակով:

Հայաստանը, լինելով զարգացող երկիր, նույնպես մեծ կախվածություն ունի դրամական փոխանցումներից: Այստեղ նույնպես շատ տնային տնտեսությունների հիմնական եկամտի աղբյուրը հենց դրամական փոխանցումներն են:

Հետազոտության նպատակը ՀՀ դրամական փոխանցումների շարժընթացի վերլուծության միջոցով ոլորտում տիրող իրավիճակի ախտորոշումն ու հիմնական միտումների բացահայտումն է:

Գրականության ակնարկ: Դրամական փոխանցումները դարեր շարունակ եղել են մարդկության պատմության մի մասը, սակայն ներկայիս ձևը սկիզբ է առել 20-րդ դարի կեսերից, երբ հաղորդակցության միջոցների և տրանսպորտի զարգացումը ավելի դյուրացրին մարդկանց տեղափոխությունը մի երկրից մյուսը: Անընդհատ տեղի ունեցող քաղաքական և տնտեսական փոփոխությունները դրամական փոխանցումների մասին նորանոր ուսումնասիրությունների պահանջ են առաջադրում:

Ռ. Ա. Սիմոնյանը իր «Աշխատանքային միգրանտներից ստացվող դրամական փոխանցումների կատեգորիայի տեսական հիմունքները և դրանց ազդեցությունը դոնոր և ռեցիպիենտ երկրների տնտեսության վրա» աշխատության մեջ ընդգծում է դրամական փոխանցումների կարևորությունը երկրի տնտեսության զարգացման համար՝ ուսումնասիրելով այն միգրացիոն գործընթացների տեսանկյունից:

ՀՀ դրամական փոխանցումների մասին ուշագրավ է նաև Ն. Պետրոսյանի «Միջազգային փոխանցումների հոսքը. Հայաստանի քրոնիկան» հոդվածը, որտեղ նա անդրադարձել է աշխարհում դրամական հոսքերի շարժընթացին և, մասնավորապես, Հայաստանի օրինակով ուսումնասիրել դրա պատճառներն ու տնտեսական հետևանքները: Պետրոսյանը նշում է, որ կա մի իրավիճակ, երբ դեպի ՀՀ դրամական փոխանցումների ծավալը ուղղակիորեն կախված է ՌԴ-ի և ԱՄՆ-ի տնտեսական վիճակից, և դրանց ցանկացած փոփոխություն հանգեցնում է ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների տատանումների, այդ թվում՝ դրամական փոխանցումների¹:


«Ռուսաստանի դեմ պատժամիջոցների ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա» հոդվածում Վ. Բովանիկյանը, դիտարկելով Ռուսաստանին՝ որպես ՀՀ գլխավոր ներդրումային և առևտրային գործընկեր, ներկա-

¹ Տե՛ս **Н. Петросян**, Поток международных денежных переводов: Хроника Армении, 2022 г., с. 87, <file:///C:/Users/User/Downloads/potok-mezhdunarodnyh-denezhnyh-perevodov-hronika-armenii.pdf>

յացնում է տնտեսական դրությունը 2022-ին՝ նշելով Հայաստանի հնարավորությունները պատերազմական շրջանում: Բուլանիկյանը գրում է. «Ռուսաստանի դեմ պատժամիջոցների կիրառումը Հայաստանի համար ստեղծում է երկարատև տնտեսական հնարավորություն: Ռուսաստանում ապրող հայերի հետ համակարգված աշխատանքի դեպքում պատժամիջոցների սպառնալիքի տակ հնարավոր է փոխանցել նրանց կապիտալը և բիզնեսը Հայաստան»¹:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար աղբյուր են հանդիսացել ՀՀ կենտրոնական բանկի, Համաշխարհային բանկի կողմից հրապարակված տվյալները և մի քանի հոդվածներ: Վերլուծելու համար կիրառվել է համեմատման և վիճակագրական մեթոդները:

Վերլուծություն: Ինչպես նշեցինք, դրամական փոխանցումներն էական ազդեցություն ունեն ՀՀ՝ որպես զարգացող երկրի տնտեսության վրա, որում գերակշռում է դրամական փոխանցումների ներհոսքը: Ներհոսք ապահովող հիմնական երկրներն են Ռուսաստանը և ԱՄՆ-ը:



Գծապատկեր 1. ՀՀ դրամական փոխանցումների ներհոսքի շարժընթացը՝ ըստ երկրների (հազ. ԱՄՆ դոլար)²

Բոլոր տարիներին, բացառությամբ 2020-2021 թթ., 50% և ավելի ներհոսք ապահովող երկիրը եղել է Ռուսաստանը: Դրամական փոխանցումների ծավալը շատ քիչ դեպքերում է, որ չի գերազանցել 1 միլիարդ ԱՄՆ դոլարը: Եթե 2007 և 2008 թթ. Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքի ծավալը կազմել է համապատասխանաբար 1,1 ու 1,4 մլրդ ԱՄՆ դոլար (կամ 495 և 630 մլրդ ՀՀ դրամ), ապա արդեն 2009 թ. նվազել է մոտ 35%-ով՝

¹ **В. Буланикян**, Влияние санкций против России на экономику Армении, 2022 г., <file:///C:/Users/User/Downloads/vliyanie-sanktsiy-protiv-rossii-na-ekonomiku-armenii-vozmoghnosti-prepyatstvie.pdf>

² Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուր են հանդիսացել ՀՀ ԿԲ-ի, արտաքին հատվածի վիճակագրության բաժնի հրապարակումները, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

հասնելով 949 մլն ԱՄՆ դոլարի (436 մլրդ ՀՀ դրամ): Հիմնական և էական պատճառը 2007 թ. վերջերին սկսած և մինչև 2009 թվականը տևած համաշխարհային մեծ ճգնաժամն էր, որը հսկայական հարված հասցրեց աշխարհի բոլոր երկրների, այդ թվում՝ Հայաստանի տնտեսությանը: Արժույթի միջազգային հիմնադրամը 2009 թ. Հայաստանի ՀՆԱ-ի համար կանխատեսել էր 15% նվազում, սակայն ՀՀ ՀՆԱ-ն կրճատվեց մոտ 25%-ով, որի պատճառներից էր դրամական փոխանցումների, ներդրումների և հարկային եկամուտների ծավալների կրճատումը:

Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքի հաջորդ անկումն սկսվեց 2014 թ., որը պայմանավորված էր նավթի համաշխարհային գների անկմամբ և Ղրիմի շուրջ ծավալված իրադարձություններով: Իհարկե, վերջինս ուղղակիորեն չազդեց Ռուսաստանից դեպի Հայաստան դրամական փոխանցումների ծավալի վրա, սակայն Ռուսաստանի դեմ քաղաքական լարվածությունը և Եվրամիության ու ԱՄՆ-ի կողմից տնտեսական պատժամիջոցները անուղղակի կերպով ազդեցին, և արդյունքում դրամական փոխանցումները 2014-2016 թթ. 1,5 մլրդ ԱՄՆ դոլարից (720 մլրդ ՀՀ դրամ) նվազեցին՝ հասնելով 896 մլն ԱՄՆ դոլարի (421 մլրդ ՀՀ դրամ), այսինքն՝ 42%:


Պայմանավորված COVID-19-ով և 44-օրյա պատերազմով՝ Ռուսաստանից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալը նորից զգալիորեն կրճատվեց: Արդյունքում դրանց միջին ամսական ծավալը 2019 թ. գրանցված 87 մլն ԱՄՆ դոլարից (41 մլրդ ՀՀ դրամ) նվազեց՝ 2020-ին կազմելով 68 մլն ԱՄՆ դոլար (33 մլրդ ՀՀ դրամ), իսկ 2021-ին 72 մլն ԱՄՆ դոլար (36 մլրդ ՀՀ դրամ):

Եթե համեմատենք այս նույն ժամանակաշրջանում՝ 2007-2021 թթ., ԱՄՆ-ից Հայաստան ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների հետ, ապա կարող ենք նկատել, որ դրանց ծավալը ժամանակի ընթացքում մեծավ մասամբ ավելացել է, և միջին ամսական տվյալները տատանվել են 968 հազար ԱՄՆ դոլարից (406 մլն ՀՀ դրամ) մինչև 4,8 մլն ԱՄՆ դոլար (2,1 մլրդ ՀՀ դրամ): Նվազագույն արդյունքը՝ 968 հազար ԱՄՆ դոլարը (406 մլն ՀՀ դրամ), գրանցվել է 2009 թ.՝ 2008-ի 1,4 մլն ԱՄՆ դոլարի (588 մլն ՀՀ դրամ) դիմաց, որի անկման պատճառը նորից համաշխարհային մեծ ճգնաժամն էր, իսկ առավելագույնը՝ 4,8 մլն ԱՄՆ դոլարը՝ 2021-ին:


Ինչ վերաբերում է 2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմին, ապա այն անուղղակիորեն ազդեց Հայաստանի տնտեսության, այդ թվում՝ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալի վրա: Ռուբլու փոխարժեքը տարվա սկզբի համեմատ արժեզրկվեց մոտ 30%-ով, և կանխատեսվում էր, որ ռուբլու նման արժեզրկումը, միաժամանակ դոլարի արժևորումն ու Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցները հանգեցնելու են ՌԴ-ից դեպի ՀՀ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների նվազմանը, սակայն սպասումները չարդարացան: Պատերազմի սկզբին ԱՄՆ դոլարի փոխարժեքը աճեց 8%-ով, իսկ ռուբլունը նվազեց 20%-ով: Սակայն, «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ-ն իր կապիտալն ավելացրեց 128 մլրդ ՀՀ դրամով, և դա եղավ առաջին ճնշումը փոխարժեքի վրա: ԱՄՆ դոլարի փոխարժեքը դրամի նկատմամբ նվազեց 17,6%-ով, ռուբլունը՝ 0,2%-ով: Արդյունքում փոխանցումների ծավալն աննախադեպ կերպով աճեց մոտ 2.5

անգամ՝ 2021 թ. 2,1 մլրդ ԱՄՆ դոլարի (882 մլրդ ՀՀ դրամ) դիմաց 2022-ին հասնելով 5,1 մլրդ ԱՄՆ դոլարի (2,1 տրլն ՀՀ դրամ):

Ինչպես տեսնում ենք, 2022 թ. դեպի ՀՀ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալի մեծ մասը՝ 69%-ը կամ 3, 6 մլրդ ԱՄՆ դոլարը (1,5 տրլն ՀՀ դրամ) բաժին է հասել Ռուսաստանին: Այդ ծավալը 4.6 անգամ ավելի է, քան 2021 թվականինը, որը կազմել էր 865 մլն ԱՄՆ դոլար (363 մլրդ ՀՀ դրամ): 2022 թ. հունվարից օգոստոս ամիսներին Հայաստան է ժամանել Ռուսաստանի Դաշնության 654 հազար քաղաքացի, իսկ մեկնել՝ 615 808: Համեմատության համար նշենք, որ 2021-ի նույն ժամանակահատվածում Ռուսաստանից ժամանածների թիվը 238 հազար էր: Սա մեծ ցուցանիշ է նման փոքր երկրի համար և, բնականաբար, իր ազդեցությունն է ունենում նաև դրամական փոխանցումների ծավալի վրա:



Գծապատկեր 2. 2022 թ. ֆիզիկական անձանց կողմից ՀՀ դրամական փոխանցումների կառուցվածքը¹




Գծապատկեր 3. Ֆիզիկական անձանց ամսական դրամական փոխանցումները (մլն ԱՄՆ դոլար)¹

¹ Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուր են հանդիսացել ՀՀ ԿԲ-ի, արտաքին հատվածի վիճակագրության բաժնի հրապարակումները, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

Եթե դիտարկենք ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալն ամսական կտրվածքով, ապա կտեսնենք նույն պատկերը՝ 2014-2022թթ. բոլոր ամիսներին գլխավոր ներհոսք ապահովողը եղել է Ռուսաստանը:

Վերլուծելով նշված ժամանակաշրջանում դեկտեմբեր և հուլիս ամիսների փոխանցումները՝ պարզ է դառնում, որ միայն Ռուսաստանից դեպի ՀՀ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալը միջինում կազմել է 140 մլն ԱՄՆ դոլար (58 մլրդ ՀՀ դրամ), մինչդեռ ԱՄՆ-ից և այլ երկրներից փոխանցումների ծավալը միասին միջինում՝ 46 մլն ԱՄՆ դոլար (19 մլրդ ՀՀ դրամ): Ընդ որում, 2022 թվականի միայն մարտ-նոյեմբեր ամիսների հանրագումարը գերազանցել է 3 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանաչափը, ինչը ավելին է, քան նախորդ բոլոր տարիների տարեկան փոխանցումների ծավալը:

Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ներհոսքից բացի, նշանակալի է նաև արտահոսքի ծավալը: Եվ այս համատեքստում կարևոր է ուսումնասիրել զուտ արտահոսքի (ներհոսքից հանած արտահոսք) ծավալի փոփոխությունը: Գծապատկերից ակնհայտ է, որ մինչև 2014 թվականը, այսինքն՝ մինչև Ղրիմի իրադարձությունները, զուտ ներհոսքի ծավալը աճի միտում է ունեցել: 2007-2014 թթ. զուտ ներհոսքի հանրագումարը կազմել է 8,7 մլրդ ԱՄՆ դոլար (3,6 տրլն ՀՀ դրամ), մինչդեռ, սկսած 2015-ից մինչև 2021 թվականը՝ Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցներից հետո, այդ ծավալը կրճատվեց մոտ 1.8 անգամ՝ հասնելով 4,9 մլրդ ԱՄՆ դոլարի (2 տրլն ՀՀ դրամ), քանի որ Ռուսաստանն առաջատար է ոչ միայն ներհոսքի, այլև արտահոսքի մակարդակով:



Գծապատկեր 4. ՀՀ զուտ դրամական հոսքերի ծավալը 2007-2022 թթ. (մլն ԱՄՆ դոլար)²

Այնուամենայնիվ, զուտ ներհոսքի մակարդակը միայն 2022 թ. կազմեց 2,6 մլրդ ԱՄՆ դոլար (1,25 տրլն ՀՀ դրամ), ինչը նույնիսկ ավելին է, քան

¹ Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուր են հանդիսացել ՀՀ ԿԲ-ի, արտաքին հատվածի վիճակագրության բաժնի հրապարակումները, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

² Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուր են հանդիսացել ՀՀ ԿԲ-ի, արտաքին հատվածի վիճակագրության բաժնի հրապարակումները, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

2018-2021 թթ. զուտ ներհոսքի մակարդակը: Ընդ որում, Ռուսաստանի համար զուտ ներհոսքը 2022 թ. 3,1 մլրդ ԱՄՆ դոլար (1,3 տրլն ՀՀ դրամ) է եղել, ինչը նորից կարող ենք կապել այսօր էլ շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքների հետ: Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների պատճառով շատ երկրներ դադարեցրել են համագործակցությունը ՌԴ-ի հետ: Հայաստանը դարձել է տարանցիկ երկիր՝ այլ երկրներից դեպի ՌԴ ապրանքների ներմուծման և ՌԴ-ից այլ երկրներ արտահանման համար: Իսկ դա նպաստել է և՛ արտահանման¹, և՛ դրամական փոխանցումների ծավալի աննախադեպ աճին:

Եզրակացություն: Կատարված վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ դեպի ՀՀ և ՀՀ-ից դուրս ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների մակարդակը շարունակաբար փոփոխությունների է ենթարկվում:

2007-2022 թթ. բոլոր ուղղություններից դեպի Հայաստան դրամական փոխանցումների տարեկան միջին ծավալը կազմել է 2,1 մլրդ ԱՄՆ դոլար կամ մոտ 880 մլրդ ՀՀ դրամ: 2022 թ. դրամական փոխանցումների մակարդակը, 2007-ի համեմատ, աճել է գրեթե 3.5 անգամ կամ, որ նույնն է, 3,5 մլրդ ԱՄՆ դոլարով (1,4 տրլն ՀՀ դրամ):

Բոլոր տարիներին դրամական փոխանցումների թե՛ ներհոսքի, թե՛ արտահոսքի ծավալի մեջ գերակշռել է Ռուսաստանի մասնաբաժինը՝ լինելով ավելի քան 50%: Հետևաբար, ՀՀ դրամական փոխանցումների ծավալը մեծապես կախված է Ռուսաստանի աշխարհաքաղաքական վիճակից: Դրա մասին է փաստում ռուս-ուկրաինական պատերազմի անուղղակի ազդեցությունը, որի հետևանքով միայն 2022 թ. ավելի քան 39 հազար ռուսներ հաստատվել են Հայաստանում, որոնք իրենց հերթին նպաստում են դեպի ՀՀ դրամական ներհոսքի աճին: Արդյունքում, 2022 թ. ներհոսքը կազմել է 5,1 մլրդ ԱՄՆ դոլար կամ 2,1 տրլն ՀՀ դրամ, որի 70%-ը կամ 3,5 մլրդ ԱՄՆ դոլարը (1,4 տրլն ՀՀ դրամ) կազմել են Ռուսաստանից փոխանցումները:

Չուտ ներհոսքի ծավալը, նորից պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմով և ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցներով, կտրուկ աճել է՝ 2022 թ., 2021-ի համեմատ, 3 անգամ: Ընդ որում, ՌԴ-ի հետ զուտ ներհոսքը աճել է գրեթե 7 անգամ, մինչդեռ ԱՄՆ-ի հետ՝ 0.8:

Ստորև ներկայացված են առաջարկներ՝ ՀՀ դրամական փոխանցումների ներհոսքը ավելացնելու ուղղությամբ.

- **սահմանել գործարքների ավելի ցածր ծախսեր.** բարձր վճարներն ու փոխարժեքի տարբերությունները խոչընդոտ են հանդիսանում դեպի ՀՀ դրամական փոխանցումների համար: Ծախսերը նվազեցնելու քաղաքականության իրականացումը կարող է խթանել ավելի հաճախակի և ավելի մեծ դրամական փոխանցումները:
- **Նպաստել ներդրումային հնարավորություններին.** ստեղծել ներդրումային պայմաններ, որոնք կծառայեն սփյուռքի համայնքների շահերին ու նպատակներին: Նրանց խրախուսելու համար ներդրումներ կատարել տեղական ձեռնարկություններում, անշարժ գույքի կամ

¹ Ըստ <https://arka.am/ru/>-ի տվյալների՝ 2022 թ. միայն հունվար-հուլիս ամիսներին ՌԴ-ի հետ արտաքին առևտրի ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ավելացել է 57.7%-ով:

ենթակառուցվածքային ծրագրերում, նպաստել տնտեսական զարգացմանը՝ միաժամանակ խթանելով դրամական փոխանցումների հոսքի մեծացումը:

- **Խթանել ֆինանսական կրթությունը.** տրամադրել ֆինանսական գրագիտության ծրագրեր և կրթական նախաձեռնություններ՝ միգրանտներին տեղեկացնելու դրամական փոխանցումների կարևորության և իրենց ֆինանսական ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու մասին: Սա կարող է անհատներին հնարավորություն տալ արդյունավետ կառավարելու իրենց ֆինանսները և մտածելու ավելի մեծ գումարներ փոխանցելու մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Քթոյան Ա., Շիրինյան Ա., Խաչատրյան Ա., Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, հետազոտություն, 2023:
2. Թադևոսյան Ռ., Ռուս-ուկրաինական հակամարտություն. տրանսֆերտներ, «Ամբերդ» տեղեկագիր, N2, 2022:
3. ՀՀ ԿԲ, Արտաքին հատվածի վիճակագրություն, www.cba.am
4. Петросян Н., Поток международных денежных переводов: Хроника Армении, 2022, <https://cyberleninka.ru/article/n/potok-mezhdunarodnyh-denezhnyh-perevodov-hronika-armenii/viewer>
5. Симонян Р.А., Теоретические основы категории денежных переводов трудовых мигрантов и их влияние на экономику стран-доноров и реципиентов, 2018, <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-osnovy-kategorii-denezhnyh-perevodov-trudovyh-migrantov-i-ih-vliyanie-na-ekonomiku-stran-donorov-i-retsipientov/viewer>
6. Агабекян Э., Курс доллара США в Армении, 2022, <file:///C:/Users/User/Downloads/kurs-dollar-ssha-v-armenii-razmyshleniya-o-prichinah-i-perspektivah.pdf>
7. Буланикян В., Влияние санкций против России на экономику Армении, 2022, <file:///C:/Users/User/Downloads/vliyanie-sanktsiy-protiv-rossii-na-ekonomiku-armenii-vozmozhnost-ili-prepyatstvie.pdf>
8. World Bank Data, <https://data.worldbank.org/>

ԳՕԱՐ ՍՕԳՕՍՅԱՆ

Տատիստիկա, ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ, 3-Յ ԿՈՐՍ

СТАТИСТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ ДИНАМИКИ ДЕНЕЖНЫХ ПЕРЕВОДОВ В РА

Ключевые слова: денежные переводы, приток, отток, чистый приток

Уровень денежных переводов меняется из года в год в зависимости от различных факторов, таких как экономические условия, возможности трудоустройства и модели миграции. Данная тема актуальна в связи с тем, что в последние годы объем денежных переводов, особенно в развивающиеся страны, достиг рекордного уровня.

В данной статье с использованием статистических методов представлены изменения потока денежных переводов в РА и возможные причины этих изменений.

GOHAR POGHOSYAN
3rd year Bachelor, Department of Statistics

STATISTICAL STUDY OF THE PROGRESS OF REMITTANCES IN RA

Keywords: remittance, inflow, outflow, net inflow

The level of remittances varies from year to year depending on various factors such as economic conditions, employment opportunities and migration patterns. Moreover, in recent years, the volume of money transfers, especially to developing countries, has reached a record level, which has made this topic relevant.

This article, using statistical methods, presents the changes in the flow of remittances in RA and the possible reasons for these changes.

ՆՎԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ
*Հաշվապահական հաշվառում և հարկում,
բակալավիրիայր, 3-րդ կուրս*

**ՀՊՏՀ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնաբառեր. ներքին վերահսկողության համակարգ,
վերահսկում, ռազմավարական նպատակ,
մոտիվացիա

Ներքին վերահսկողական համակարգը, համարվելով ռազմավարական ծրագրի իրականացումը, տեղեկատվական հոսքերի հուսալի, արժանահավաք, լիարժեք փոխանցումը, ռեսուրսների պարզաճ կառավարումը և կազմակերպության գործունեության ներքին իրավական ակտերին համապատասխանությունն ապահովող հիմնական գործիք, մեր ուսումնասիրության հիմնական առանցքն է: Այդ նպատակով ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ իրականացվել են անանուն հարցումներ և ուսումնասիրվել են ՀՊՏՀ ներքին իրավական կարգերն ու փաստաթղթերը: Աշխատակիցների վերահսկման օրինակը գործիք է, որի միջոցով գնահատել ենք ՀՊՏՀ ներքին վերահսկողության համակարգը:

Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՊՏՀ-ում առկա են ներքին վերահսկողական որոշակի խնդիրներ, որոնք առնչվում են ուսանողների կողմից գնահատման սուբյեկտիվությանը, Moodle և UMS համակարգերի կիրառման դժվարություններին:

Առաջարկվել է փոփոխել ուսանողների կողմից դասախոսներին գնահատելու կարգը և UMS ու Moodle համակարգերի շնորհիվ ապահովել մեկ միասնական հարթակի գործունեությունը, որով կգործարկվեն տեղեկատվական հոսքերը:

Ներածություն: Կազմակերպության ռեսուրսների արդյունավետ կառավարման, նվազագույն ծախսերով հնարավոր առավելագույն արդյունք ստանալու ու ռազմավարական նպատակներին հասնելու համար կարևոր է յուրաքանչյուր օղակի արդյունավետ կառավարումը:

ՀՊՏՀ ռազմավարական նպատակների իրագործումն ապահովելու համար անհրաժեշտ է.